

ի վրա Շարուն, ու խառ զՂազէ ու վարեց զՇամբուն չալիչն ու նստաւ: Երեկ Շամբուն նաչիպն Դէնումն ու Օթամիչն ՄՌ (50,000) հեծմնով կովեցան, ու խանկրեց սուլտանն, որ Դէնումն գուլում անցաւ ու բռնուեցաւ, նայ ամէն հեծելն փախան, զնայ Օթամիչն մտաւ ի Դմշխայ բերդն ու հնազանդեցաւ սուլտանին»: Թաղրի Պիրտի կը վկայէ որ սուլթանը յաղթեց ապստամբներուն եւ Մարտ 15, 1400ին, Կազան գրաւեց: Հոն որոշուեցաւ հաշտուիլ թանամի հետ եւ պատուիրակութիւն գրկուեցաւ Մարտ 16ին որ չյաջողեցաւ եւ երկու բանակները ճակատեցան: Վասիլ 50,000 կը նշանակէ թանամի եւ էյթամիչի զօրքերուն թիւը, մինչ թաղրի Պիրտի 5,000 ձիաւոր եւ 6,000 հետեւակ կը նշանակէ: Սուլթանը կը յաղթէ եւ թանամ գերի կը բռնուի. իսկ էյթամիչ թաղրի Պիրտի հօր եւ ուրիշ էմիրներու հետ, 3,000 մամուլներով կը փախչին եւ Դամասկոս կ'ապաստանին: Սակայն ճիշտ չէ որ էյթամիչ «հնազանդեցաւ սուլտանին»: Թաղրի Պիրտի կը վկայէ որ էյթամիչ հաղիւ Դամասկոս կը հասնի, յոյնած ու պարսասած, Դամասկոսի էմիրները կը յարձակին անոնց վրայ ու կը բռնեն էյթամիչը, թաղրի Պիրտի հայրը եւ ուրիշ մամուլք էմիրներ ու զանոնք կը բանտարկեն կառավարական Պարտին մէջ, մինչեւ որ Սուլթանը Դամասկոս եկաւ եւ Ապրիլ 10ին էյթամիչը եւ իր ապստամբ ընկերները զիշերը սպաննուեցան Սուլթանին հրամանով եւ զլուխը՝ սենեկապետ Փարիսի գլխուն հետ գրկուեցաւ Գահիրէ: Այս մասին Վասիլ կը գրէ որ «Երեկ սուլտանն, զնզանեց զՕթամիչն ու զամէն պարոնայքն, ու յռամատան ամսուն 2 (6) շարքեցին զՖէրիս հիճուպն ու ալքեցին զմատունքն, եւ զէնեցին զՕթամիչն ու տասնապարապետ պարոնի (էյթամիչի) հետն, ու յ(ս)ղարկեցին զ(լ)ինին կախեցին ի Պ(ա)պղուէլն ու ի թաղթաղալայն»: Վասիլի համաձայն՝ Ռամատան 2 (6)ին եղաւ էյթամիչի գլխատումը, մինչ թաղրի Պիրտի կը վկայէ որ Շասպան 14ին (Ապրիլ 10) Սուլթանին կողմնակից

էմիրները որոշեցին էյթամիչի եւ իր կողմնակիցներուն մահացումը. մինչ Ռամատան 6 հաւասար է Մայիս 5, երբ իրր թէ տեղի ունեցաւ գլխատումը, ըստ Վասիլի: Գուցէ Վասիլ չփոթութեան մատնուած է, որովհետեւ արդարեւ Սուլթանը թանամը ու Եունուսը մահացուց Մայիս 2ին, Դամասկոսէն Կազա վերադառնալէն առաջ: Թաղրի Պիրտի չի յիշեր Փարիսի շարքարանքի ենթարկուիլը եւ մասններուն այրուիլը:

Վասիլի բնագիրը իրապէս «Ժ (10) Ռպետ» այսինքն հազարապետ ունի փոխանակ հրատարակութեան տասնապարապետ ձեւին: Արդարեւ էյթամիչի հետ, ըստ թաղրի Պիրտի, տասը էմիրներ մահուան դատապարտուեցան եւ սպանուեցան նոյն զիշերը: Վասիլի բնագիրը պէտք է եղածին պէս թողուլ հոս: Թաղրի Պիրտի կը հաստատէ որ էյթամիչի եւ Փարիսի զլուինները նախ կ'ախուած ցուցադրուեցան Միջնարեղի Դրան վրայ եւ յետոյ Զուվայիլա Դրան (Պապ Զուվայիլա) վրայ:

Վասիլ կը պատմէ որ «Ելուղայ Մըճնունն, որ մեծ ուքատար էր, հանին Իսկանտարու զնզանէն ի Տիմիատ, ու կու դարձնին ի զնզան, նայ փախաւ ու ժողվեց յարապ ու թուրք, ու նեղցուց ի վրա Մորայ ԺԵ (15) օր»: Դէպքը սապէս կը պատմէ թաղրի Պիրտի. Մարտ 6ին (1400) Շարաթ օր էմիր Սուլթուն ալ-Մամուրի սենեկապետը Տամիթայի բերդէն կը հանեն բանտարկեալներ, զանոնք Աղեքսանդրիա բերելու համար: Բանտարկեալներուն մէջ էր նաեւ Եալուղա ալ-Մահնուն. եւ երբ բանտարկեալներով պահակները կը հասնին Տերութ Սուլթուն ալ-Մամուրի, տեղոյն յարգուած Շէյխէն ինճոյքի կը հրաւիրուին, որուն ընթացքին Եալուղա իր ընկերներով կը յարձակին Սուլթունի եւ իրենց պահապաններուն վրայ, զանոնք շղթայի կը դարնեն. այդ պահուն Գահիրէէն եկած նաւ մը, որուն մէջ չորս զերեալ էմիրներ կային, զետարի կը մօտենայ: Եալուղա այս ալ կը գրաւէ, էմիրները ազատելով իրեն կը միացնէ եւ կը յարձակին Տամահնուր քա-